

մինչեւ ի Զին եւ անտի դարձած է ի Ախնկափօր, եւ պիտի վերագառնայ ի Կալկաթա:

Ամենուրեք մեր եղբարք մեծ սիրով եւ եռանդեամբ գիմաւորած՝ ընդունած եւ հիւրասիրած են իւրեանց Առաջնորդը՝ եւ փոխադարձաբար միսիթարուած:

Պ. ԱՊԵՔՍԱՆԴՐԻ ԽՍԱՀԱԿԵԱՆՑ.

Գանձակեցի Մեծ. Պ. Աղէքսանդր Աղաջանեան Խսահակեանց՝ ըստ յորդուրանց Հոգեզգօն Գրիգոր Եպիսկոպոսի Մուշեղեանց՝ յանուն եւ ի նպաստ Ճեմարանի Մայր Աթոռոյս տարեկան յշտուք նուրիմ նուրիմ ուխտելով իյշատակ հանգուցեալ հօրն իւրոյ Պ. Աղաջանի, ներկայ տարւոյս համար կատարեց իւր խոստումը՝ յիշտուք ուրի. նուրիմ յղելով առ Վ. Ե. Հ. Հայրապետ Աղքիս, ուստի եւ նորին Արքութեան Օրհնութեան Կոնդակին արժանացաւ:

Կդովեմք յիշեալ բարեպաշտ երիտասարդի ուստմնասիրական եռանդը եւ առաքինասիրութիւնը՝ եւ հրապարակաւ շնորհակալութիւն կը յայտնեմք:

Խ Ա 2 Ա Ն Շ Ա Ն.

Վ. Ե. Հ. Հայրապետ ամենայն Հայոց՝ Արցախոյ վիճակին Փոխանորդ եւ Հոգեւոր դպրոցաց Թեմական Վերատեսուչ բարեշնորհ Արիստակէս Վարդա-

պետ Արդրակեանցին ականակուռ Խաչանշամ շնորհեց:

Յիշեալ Արք. Վարդապետի համեստ վարք եւ խոհեմ ընթացքն ուսումնասիրական ջանք եւ մատենագրական վաստակէնքն կրթական արդիւնքն՝ մանաւանդ բարեկարգասէք նախանձախնդրութիւնն եւ կառավարական յաջողակութիւնն իւր պաշտօնի մէջ բազում գովեստից արժանի են, ուստի եւ իրաւամբ արժանացաւ Վ. Ե. Հ. Հայրապետի ուշադրութեան եւ յիշեալ պարգեւատըրութեան, որով անշուշտ աւելի իրախուսուելով եւ միսիթարուելով՝ յաւետ կաշխատի յօգուտ եւ ի փառս Աղքի եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց ինչպէս նաեւ վիճակին Արցախոյ՝ անձնանուէք եւ արդիւնաւոր գործել եւ շահատակել, եւ առաւել եւս պատուոյ եւ փառաց արժանանալ:

Յաւօք սրափ Կհաղորդեմք, զի ամսոյն 6ին լուսնալոյ գիշեր՝ Ախալցխա քաղաքում վախճանեցաւ

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱԽԱԳ ՔԱՀԱՆԱՑ

ՏԵՄՐԱԶՕՂԼԵՆՑ,

որ Ախալքալաքու եւ Ծալկայի կողմանց Գործակատար էք եւ յասուկ պաշտօնով յիշեալ քաղաքը գնացած էք նոյն օրերում:

Հանգուցելոյն երկիւղած՝ բարեպաշտ եւ ջերմեռանդ կրօնասիրութիւնն, աղնիւ եւ հեղահամբոյր ընաւորութիւնն, համեստ վարք եւ բարքն, Հոգեւոր Իշխանութեան յանձնարարութեանց կա-